ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արթուր Մարտիրոսյան, Կարեն Թռչունյան

2. Զբաղեցրած Պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալներ

3. Գործուղման Վայրը և Ժամկետները

Ղրղզստան, Բիշկեք 2022թ մայիսի 24-27-ը

4. Հրավիրող Կողմը

Եվրասիական տնտեսական համագործակցության հանձնաժողովի նախագահի տեղակալ Վ. Մ. Մյասնիկովիչ

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Եվրասիական տնտեսական համաժողովին մասնակցելու նպատակով

6. Քննարկված Թեմաները

- Տնտեսական զարգացումը՝ որպես Եվրասիական տնտեսական միության մինչև 2025 թվականի ռազմավարության առանցքային ուղղություն
- Ռազմավարություն 2025 – երիտասարդության տեսակետը ԵԱՏՄ զարգացմանը
- Երիտասարդների ինտեգրումը ԵԱՏՄ-ին
- Ինչպիսի կարիքներից են ձևավորվում երիտասարդական հիմնական խմբերը՝ ԵԱՏՄ- հետի հետ փոխգործակցելու համար
- Ինպիսի պայմաններ պետք է ունենա ԵԱՏՄ-ն՝ ամբողջ աշխարհի երիտասարդ մասնագետներին ներգրավելու համար
- Երիտասարդների ինտեգրման գործընթացվում ինչ դերակատարություն ունի կրթությունը
- ԵԱՏՄ միջազգային գործընկերների հետ արդյունավետ համագործակցության համար ինչպիսի հնարավորություններ է ստեղծում երիտասարդական դիվանագիտությունը

- Բարձրագույն կրթության կրթական ծրագրերի իրականացման գործում փոխգործակցության ցանցային ձևերի մշակում
- Բարձրագույն կրթության արդի հիմնախնդիրները
- Ցանցային համալսարանի ստեղծում և ընդհանուր կրթական ծրագրերի իրականացում
- Բարձրագույն կրթության դիպլոմների փոխճանաչում
- ԵԱՏՄ տարածքում բարձրագույն կրթության վերջնարդյունքների փոխճանաչում
- ԵԱՏՄ տարածքում ակադեմիանական և ուսանողական շարժունության հնարավորությունների ընդլայնում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«Ռազմավարություն - 2025. Երիտասարդության հայացքը ԵԱՏՄ-ի զարգացման վերաբերյալ» խորագրով քննարկման ժամանակ խոսվել է վերջին տարիներին երիտասարդների հետ աշխատանքի մասին, դրա շրջանակներում միջազգային խոշոր կազմակերպությունների հետ համագործակցելու մասին: Քննարկվել են Եվրասիական տնտեսական միության մինչև 2025 թվականի ռազմավարության առանցքային ուղղությունները, որին ակտիվորեն կարող են ներգրավվել նաև երիտասարդները: Արթուր Մարտիրոսյանը կարևորել է ԵԱՏՄ շրջանակում երիտասարդական քաղաքականության միտվածությունը՝ երիտասարդների ներուժի իրացման, մարդկային կապիտալի զարգացման, կրթության, միասնական աշխատաշուկայում ինտեգրվելու և բազմաթիվ այլ հարցերի ուղղությամբ:

ԱՊՀ-ի և այլ միջազգային կազմակերպությունների երիտասարդական քաղաքականության ոլորտում համագործակցության փորձի հիման վրա ԵԱՏՄ երիտասարդական օրակարգի ձևավորման համար նա ներկայացրել է մի շարք առաջարկներ, որոնք վերաբերում են ոչ ֆորմալ ուսուցմամբ կրթության մատչելիության ընդլայնմանը, նորարարությունն ու ստեղծարարությունը խրախուսող հեղինակավոր մրցույթների կազմակերպմանը, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նախագծերի իրականացմանը:

Գործուղման ընթացքում Ա. Մարտիրոսյանը հանդիպումներ է ունեցել նաև Ղրղզստանի տնտեսագիտական համալսարանի ռեկտորի տեղակալի, Պերմի շրջանի պատգամավորների, Մոսկվայի պետական միջազգային հարաբերությունների ինստիտուտի ռեկտորի տեղակալի և այլ պաշտոնյաների հետ:

Բարձրագույն կրթության կրթական ծրագրերի իրականացման գործում փոխգործակցության ցանցային ձևերի մշակում խորագրով քննարկման ժամանակ ելույթով հանդես է եկել Կարեն Թռչունյանը հետևալ թեմայով՝ «Բարձրագույն կրթության արդի մարտահրավերներն ու հեռանկարները ինտեգրացիոն գործընթացներում»: Քննարկվել են մինչև 2025 թ.բարձրագույն կրթության ինտեգրման առընչվող խնդիրները և հնարավոր լուծումները ԵԱՏՄ երկրներում: Կարեն Թռչունյանը կարևորել է ոչ միայն բարձրագույն կրթության դիպլոմների այլ նաև վերջնարդյունքների փոխճանաչման հարցը: Անդրադարձել է նաև բարձրագույն կրթության զարգացմանը և մինչև 2040 թ բուհական կրթության մարտահրավերներին:

Գործուղման ընթացքում Կարեն Թռչունյանը հանդիպել է Ղրղզստանի կրթության և գիտության նախարարի և բուհերը համակարգող փոխնախարարի հետ, Եվրասիական տնտեսական համագործակցության հանձնաժողովի անդամ (նախարար) Ս. Գլազևի և այլ պաշտոնյաների հետ: Բացի այդ քննարկվել են նոր համագործակցության հնարավորություններ Ռուսաստանի Կառավարման պետական համալսարանի, Ռուսաստանի ԱԳՆ-ի Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի, Եվրազեսի համալսարանի, Ղրղզստանի տնտեսագիտական համալսարանի և այլ բուհերի ղեկավարների հետ: Հանդիպում է տեղի ունեցել նաև ԱՊՀ Միջխորհրդարանական ասամբլեայի ներկայացուցիչների, ինչպես նաև Պերմի շրջանի պատգամավորների հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են բարձրագույն կրթության, գիտության և երիտասարդության ոլորտում համագործակցության զարգացման և ամրապնդման հարցեր: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել համատեղ նոր ծրագրեր մշակելու և իրականացնելու վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են գործընկեր երկրներում երիտասարդական ոլորտում բարեփոխումների խթանման ուղիները, փորձի փոխանակման նոր ուղիներ մշակելը:

Հանդիպումների ընթացքում քննարկվել է ԵԱՏՄ ցանցային համալսարանի ընդհանուր կրթական ծրագրերում երկրների ներգրավվածության հնարավորությունները, ուսանողների փոխանակությանը նպաստող նոր

մոտեցումներ մշակելը, ինչպես նաև տարբեր մասնագիտություններով պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածությունը ցանցային համալսարանի աշխատանքներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Արթուր Մարտիրոսյան

Կարեն Թռչունյան 01.06.2022